ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

«28» հոկտեմբերի 2022թ. *ք. Երևան, Ս. Դավթի 87Ա*

ՈՐՈՇՈՒՄ N 3061-Ա

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս քննարկելով ֆիզիկական անձ Խաչատուր Նվերի Շահբազյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային վարչարարության ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող թիվ N29566/2022/ԿՈՒՎ4/Ա արձանագրության (արձանագրությունը կցվում է)՝ ֆիզիկական անձ Խաչատուր Նվերի Շահբազյանի (Հասցե՝ Երևան, Նորաշեն թղմ. 19 շ. 30 բն., ՀՎՀՀ՝ 20106778, ՀԾՀ՝ 4008840648) չկատարված հարկային պարտավորությունը 07.09.2022թ. դրությամբ կազմել է 2.839.500 դրամ, որից հարկ՝ 2.000.000 տույժ՝ 839.500 դրամ:

Վերոնշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ՝ վարչական ակտ ընդունելու նպատակով 30.09.2022թ. հարուցված վարչական վարույթի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի տվել:

ՀՀ կառավարության 30.12.2010թ. թիվ 1775-Ն որոշման հիման վրա ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունների համաձայն՝ ֆիզիկական անձի կողմից 14.05.2018թ. օտարվել է 08.05.2018թ. ձեռք բերված մարզ Արագածոտն համայնք Աշտարակ ք. հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքը «ՀԱՍՍԱՆ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ00179936/, 03.11.2018թ. օտարվել է 01.11.2018թ. ձեռք բերված մարզ Արագածոտն համայնք Աշտարակ ք. հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքը «ԱԼԴԵՐԵՒ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ՝ 00191724/:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք, մինչև 29.06.2019թ. գործող խմբագրությամբ) 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «ա» ենթակետի՝ տվյալ գույքի օտարումը համարվում է ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում և գույքի օտարումից ստացվող եկամուտները այլ հավասար պայմաններում համարվում են եկամտային հարկով հարկման օբյեկտ:

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

Օրենսգրքի 140-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձը, հանդիսանալով եկամտային հարկ վճարող, Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն պարտավոր է մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացնել 151-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված եկամուտների մասով եկամտային հարկի տարեկան հաշվարկ և վճարել դրա արդյունքում առաջացող հարկային պարտավորությունների գումարը:

Ֆիզիկական անձի կողմից չի ներկայացվել 2018թ. եկամտային հարկի տարեկան հաշվարկը և չի կատարվել հարկի վճարումը:

Օրենսգրքի 150-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ եկամտային հարկի հաշվարկման համար հիմք է ընդունվել մարզ Արագածոտն համայնք Աշտարակ ք. հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքի պայմանագրային արժեքի 10 տոկոսը:

Արդյունքում սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված հարկային պարտավորությունը կազմում է 2.839.500 դրամ, որից հարկ՝ 2.000.000 տույժ՝ 839.500 դրամ, որն առաջացել է ֆիզիկական անձի կողմից կատարած գույքի օտարման գործարքի արդյունքում, ինչպես նաև հարկի գումարը սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն հաշվարկված տույժերից:

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր, որոնք ենթակա են կատարման մինչև սույն որոշման կատարման օրը՝ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի հետ միասին:

Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորության վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 64-րդ, 66-րդ կետերով, 398 հոդվածի 5-րդ և 7-րդ մասերով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ֆիզիկական անձ Խաչատուր Նվերի Շահբազյանից գանձել **2.839.500** ՀՀ դրամ պարտավորության գումար համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝
07.09.2022թ-ի դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ

Հ/Հ	Հարկի և այլ պարտադիր վճարի տեսակը	Հաշվարկված հարկ/վճար		Հաշվարկված տույժ	Հաշվարկված տուգանք	Ընդամենը	Վճարման ուղղությունը	Հաշվի համարը
		առաջացման ամսաթիվ	գումար					
1	2	3	4	5	6	7= 4+5+6	8	9
1	Եկամտային հարկ	22.04.2019թ	2.000.000	839.500		2.839.500	պետական բյուջե	900008000490

2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ծառայություն:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել ֆիզիկական անձին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին, կամ վերադաս վարչական մարմին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ստացա որոշման օրինակը _____ _____ _____
Ստորագրություն հարկ վճարողի /կամ ֆիզ. Անձի/ պաշտ անձի անուն ազգանուն ամսաթիվ

Կատարող՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Անի Ենոքյան, հեռ. 010-30-91-91 /91-55/: